ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՊՁԲ-20/10 ծածկագրով հրատապ բաց մրցույթով դյուրակիր համակարգիչների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.08.2020թ. ժամը 11:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Արա Խաչատրյան /գնահատող/
Հարություն Մուշեղյան /բացող/
Հասմիկ Տոնոյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան
Բացակայում էր՝ Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՊՁԲ-20/10 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՊՁԲ-20/10 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Թիմ» ՍՊԸ	Karen.asaturyan@telecomarmenia.am
2	«Էկո Պրոջեքթ» ՍՊԸ	ecoprojectllc@gmail.com

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափա-բաժին	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		«Թիմ» ՍՊԸ		«Էկո Պրոջեքթ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	2 700 000 000	3 860 000 000	4 632 000 000	3 000 000 000	3 600 000 000

6. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

6.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2020թ օգոստոսի 17-ին ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 17.08.2020թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ավետիսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Արա Խաչատրյան /գնահատող/
Հարություն Մուշեղյան /բացող/
Հասմիկ Տոնոյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան
Բացակայում էր՝ Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

7. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

7.1 «Թիմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջներին, բացակայում է նաև Պրոցեսորի տեսակը /մոդելը/՝ արագագործության հաճախականությունը համեմատելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7.2 «Էկո Պրոջեքթ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1-ում նշված իրական շահառու հանդիսացող անձի անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը չեն համապատասխանում միմյանց;
- բացակայում է հավելված 1.1-ում առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ինչպես նաև ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջներին, բացակայում է նաև Պրոցեսորի տեսակը /մոդելը/՝ արագագործության հաճախականությունը համեմատելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

8. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

8.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Թիմ» ՍՊԸ–ին և «Էկո Պրոջեքթ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 7.1 և 7.2 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

8.2 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2020թ օգոստոսի 19-ին, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 19.08.2020թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արմեն Ավետիսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Արա Խաչատրյան /գնահատող/
	Հարություն Մուշեղյան /բացող/
	Հասմիկ Տոնոյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Անուշ Մարգարյան
Բացակայում էր՝	Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

9. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

9.1 «Թիմ» ՍՊԸ-ի և «Էկո Պրոջեքթ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

10. Գնահատման գործընթացի կասեցման և բանակցությունների կազմակերպման վերաբերյալ.

10.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և «Թիմ» ՍՊԸ-ին և ««Էկո Պրոջեքթ» ՍՊԸ-ին հրավիրել հայտով ներկայացված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ս.թ. օգոստոսի 21-ին ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի բանակցությունների կազմակերպման նիստը շարունակվեց 21.08.2020թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արմեն Ավետիսյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Արա Խաչատրյան /գնահատող/
	Հարություն Մուշեղյան /բացող/
	Հասմիկ Տոնոյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Անուշ Մարգարյան
Բացակայում էր՝	Հարություն Մարտիրոսյան /գնահատող/
Մասնակցում էին՝	«Թիմ» ՍՊԸ-ի և ««Էկո Պրոջեքթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները

11. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակցի հետ միաժամանակյա բանակացությունների վարման մասին

11.1 «Թիմ» ՍՊԸ-ի և ««Էկո Պրոջեքթ» ՍՊԸ-ի հայտով առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպել բանակցություն սահմանելով 5 րոպե տևողությամբ ժամանակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

11.2 Միաժամանակյա բանակացությունների վարման համար սահմանված ժամանակահատվածի ավարտին գնի վերաբերյալ «Թիմ» ՍՊԸ-ի և ««Էկո Պրոջեքթ» ՍՊԸ-ի կողմից նոր առաջարկներ չեն եղել /հիմք՝ հավելված 1/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

11.3 Հիմք ընդունելով սույն արձանագրության 11.2 կետը «Թիմ» ՍՊԸ-ի և ««Էկո Պրոջեքթ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել անբավարար և մերժել՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

12. Գնահատման արդյունքների մասին.

12.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած ոչ մի հայտ չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

¶
Գնահատող հանձնաժողով՝

---------- Արմեն Ավետիսյան /նախագահ/

---------- Արա Խաչատրյան

---------- Հարություն Մուշեղյան

---------- Հասմիկ Տոնոյան

---------- Անուշ Մարգարյան /քարտուղար/

Հավելված 1

ՀՀԿԳՄՄՆՀԲՄԱՊՁԲ-20/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով դյուրակիր համակարգիչների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության

Բանակցությունների արդյունքում առաջարկված գները

Չափաբաժին	Աշխատանքի անվանումը	Նախահաշվային գինը	«Թիմ» ԲԲԸ		«Էկո Պրոջեքթ» ՍՊԸ	
			Առաջարկված գինը, ՀՀ դրամ			
			առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	Դյուրակիր համակարգիչներ	2 700 000 000	3 860 000 000	4 632 000 000	3 000 000 000	3 600 000 000
Բանակցությունների ավարտին առաջարկված գները			3 860 000 000	4 632 000 000	3 000 000 000	3 600 000 000

<<Թիմ>> ՍՊԸ ներկայացուցիչ ----------Նելլի Մալյան

<<Էկո Պրոջեքթ>> ՍՊԸ ներկայացուցիչ ----------Ալբերտ Մկրտչյան